բացւոց, որպէս մոլին Դամասկոս և այլ քաղաքք ։ Եւ ընկալեալ զօրավարին զխոստումն՝ գրեալ ազդ արար Օմարայ · գրեցին նաեւ Յոյնք եւ առաքեցին պատգամաւորս 'ի կողմանց Յորդանանու ։ Հասեալ նոցա 'ի Մէքքէ քաղաք մատուցին զգիրն առ Օմար, և 'ի ձեռն թարգմանի խնդրէին հաշտութիւն, 'ի պահուն յայնմիկ խաստութեամբ վարեցաւ Օմար ընդ նոսա, և ասէր ամփոփել Կայսեր զձեռն իւր 'ի կողմանցն յայնոցիկ · ապա ժողովեալ զբարեկամս իւր ընթերցաւ առաջի նոցա զգիր զօրավարին իւրոյ, եւ խորհրդով նոցին ել 'ի ճանապարհ զօրու ծանու ։ Հասեալ զօրաց նորա 'ի տեղի ուրեք 'ի ճանապարհին աւարի առին զայգի ուրումն քրիստոնէի, որ մտեալ էր ընդ լծով ծառայութեան Արաբացւոց եւ ընկալեալ գիր դաշանց յՕմարայ · եւ 'ի բողոքել առնն, թոյլ ետ Օմար զօրաց իւրոց ուտել զբովանդակ բերս այգւոյն, եւ ինքն վճարեաց զգինն ։ Ի չարս գրեանց Ս · Աթոռոյս գտանի յետկար ինչ գրեալ 'ի մագաղաթի յանուն Օմարայ 'ի 15 թուին Հիճրէթի, սովին խմաստիւք առեալ Գրիգորի եպիսկոպոսի որդւոյ Եզեկիէլի Եդեսացւոյ ։ Եհաս Օմար յԵրուսաղէմ նստեալ յուղտ արագընթաց (հէճին), զոր Արաբացիք կոչեն [illegible], եւ էջ յանդիման քաղաքին 'ի լեառն Ձիթենեաց ։ Ել առ նա մի ոմն 'ի մեծամեծաց յողջոյն 'ի դիմաց Պատրկի քաղաքին եւ առաջի ետ նմա զբան հաշտութեան առնուլ զհարկն և 'ի խաղաղութեան պահել զքաղաքն և զեկեղեցիս որ 'ի նմա · խոստացաւ նմա Խալիֆայն առնել այնպէս · յաւել պատգամաւորն խնդրել և վասն տեառն իւրոյ ճանաչել զիշխանութիւն նորին եւ վաւերական համարել զփոխադարձ պայմանադրութիւնս հաշտութեան որ 'ի ձեռն նորին իշխանի քաղաքին · զայն եւս յանձն առ Օմար ։ Զկնի այսր ել առ նա Պատրիկ քաղաքին բազմութեամբ քրիստոնէից, և եդին զպայման հաշտութեան ։ Իսկ Սոփրոնիոս Պատրիարգն յայտ արար ժողովրդոց, թէ Աստուած Օմարայ ետ զյաղթութիւնն Երուսաղէմի առանց հեղման արեան Քրիստոնէից ։ Ապա գրեաց Օմար զգիր դաշանց, զոր խնդրէին Երուսաղէմացիք, ըստ այսմ օրինակի ։

Զայս գիր ետ ծառայն Աստուծոյ Օմար իշխանն հա-